ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Ν ՎԱՇՎՏՄ-ԳՀԱՊՁԲ-19/5-1

ք. Երևան «12» 06 2019թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս գործերի կառավարչի պաշտոնակատար Վ.Պապիկյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Սմարթլայն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ. Ղարիբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է **Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կարիքների համար** սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ***գրասենյակային նյութեր և գրենական պիտույքներ*** (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **5 օրից ավելի:**

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **5 օրից ավելի,**

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Պայմանագրի գինը կազմում է 194880 /հարյուր իննսունչորս հազար ութ հարյուր ութանասուն/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և անհրաժեշտ շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝

մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի

փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պայմանագրով սահմանված Գնորդի իրավունքները և պարտավորությունները փոխանցվում են **Շուկայի վերահսկողության տեսչական մարմնին՝** բացառությամբ ֆինանսական գործառույթների:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| Վարչապետի աշխատակազմ | «Սմարթլայն» ՍՊԸ |
| ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1 | ք.Երևան, Վարդանանց 110 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ |
| Հ/Հ 900011024099 | Հ/Հ 163007031509 |
| ՀՎՀՀ 02505554 | ՀՎՀՀ 01548908 |
| | Հեռ. 010 558483 |
| | Տնօրեն՝ Տ. Ցաքիքյան |
| ---------------------------- | ---------------------------- |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված
«12» 06 2019 թ. կնքված
ՎԱՇՎՏՄ-ԳՀԱՊՁԲ-19/5-1 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | Մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ժամկետը* | |
| 1 | 30192114/4 | Թանաք կնիքի բարձիկի համար Flamingo | "YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO" LTD ՉԺՀ | Գույնը՝ կապույտ: Շշի ծավալը՝ 30մլ: Շիշն ունի չափաբաժանիչ, որի շնորհիվ թանաքը լցվում է բարձիկին անհրաժեշտ քանակությամբ: | հատ | 220 | 440 | 2 | ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2 | II-րդ եռամսյակ | 1 |
| | | | | | | | | | | III-րդ եռամսյակ | 1 |
| 2 | 30192114/5 | Թանաք կնիքի բարձիկի համար Flamingo | "YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO" LTD ՉԺՀ | Գույնը՝ կապույտ: Շշի ծավալը՝ 30մլ: Շիշն ունի չափաբաժանիչ, որի շնորհիվ թանաքը լցվում է բարձիկին անհրաժեշտ քանակությամբ: | հատ | 170 | 8840 | 52 | ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2 | II-րդ եռամսյակ | 15 |
| | | | | | | | | | | III-րդ եռամսյակ | 37 |
| 3 | 30192128/6 | գրիչ գելային Gel Pen | "YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO" LTD ՉԺՀ | Գրիչ գելային, 0.7մմ կամ 1 մմ ծայրով , պատյանի վրա երկարությամբ թափանցիկ պատուհանով՝ գրիչում գելի | հատ | 135 | 6750 | 50 | ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2 | II-րդ եռամսյակ | 19 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | պարունակությունը ստուգելու համար, կափարիչով, գրպանին ամրացնելու մետաղական ամրակով, գրիչի երկարությունը առնվազն 147մմ, գույները՝ կապույտ, կարմիր, կանաչ և սև՝ գնորդի հետ համաձայնեցված քանակներով: | | | | | | III-րդ եռամսյակ | 31 |
| 5 | 30192133/3 | Սրիչներ Sharpener | "YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO" LTD ՉԺՀ | Սրիչ բարձր որակի, գրաֆիտե միջուկով մատիտի համար, սրելուց առաջացած մնացորդներ հավաքման տարայով: | հատ | 60 | 600 | 10 | ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2 | II-րդ եռամսյակ<br>III-րդ եռամսյակ | 4<br>6 |
| 6 | 30192160/4 | Ծորիչներ Berlingo | "YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO" LTD ՉԺՀ | Նախատեսված տարբեր տեսակի թղթերի վրա տպագրված կամ գրիչով գրված տեքստեր սպիտակեցնելու (ջնջելու) համար, վրձինով, առնվազն 20 մլ հերմետիկ փակվող տարայով: | հատ | 220 | 2200 | 10 | ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2 | II-րդ եռամսյակ<br>III-րդ եռամսյակ | 4<br>6 |
| 7 | 30192710/6 | Սոսնձամատիտ գրասենյակային Glue Stick | "YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO" LTD ՉԺՀ | Գլանաձև, պլաստմասե փաթեթավորմամբ, ստորին հատվածում սոսնձամատիտի բարձրությունը կարգավորող պտուտակով, սոսնձի բաղադրությունը PVP, առանց հոտի, նախատեսված թուղթ, ստվարաթուղթ և ֆոտո սոսնձելու համար: Սոսնձի գլանակի բարձրությունը առնվազն 7սմ, տրամագիծը առնվազն 2սմ: Քաշը՝ 20-22գր | հատ | 200 | 2000 | 10 | ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2 | II-րդ եռամսյակ<br>III-րդ եռամսյակ | 4<br>6 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | 30192720/5 | Գծանիշ Skyglory | "YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO" LTD ՉԺՀ | Տարբեր գույնի (առնվազն 5 գույն)՝ գնորդի հետ համաձայնեցված քանակներով, նախատեսված ընդգծումներ, նշումներ անելու համար, ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից տափակ ծայրոցով | հատ | 130 | 1950 | 15 | ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2 | II-րդ եռամսյակ | 4 |
| | | | | | | | | | | III-րդ եռամսյակ | 11 |
| 9 | 30197111/3 | կարիչի մետաղալարե կապեր, փոքր Max | "YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO" LTD ՉԺՀ | Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ N10: Տուփի մեջ 1000հատ | տուփ | 50 | 500 | 10 | ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2 | II-րդ եռամսյակ | 4 |
| | | | | | | | | | | III-րդ եռամսյակ | 6 |
| 10 | 30197112/3 | կարիչի մետաղալարե կապեր, միջին Max | "YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO" LTD ՉԺՀ | Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ N24/6,N26/6 համամասնորեն, Տուփի մեջ 1000 հատ: | տուփ | 75 | 750 | 10 | ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2 | II-րդ եռամսյակ | 4 |
| | | | | | | | | | | III-րդ եռամսյակ | 6 |
| 11 | 30197230/5 | թղթապանակ, թելով, թղթյա թղթապանակ | << | Առնվազն 1,15 գ/սմ3 խտությամբ ստվարաթղթից, A4 ձևաչափի, Բ տիպի, թելակապերով, հաստությունը 0,5-ից մինչև 1,5սմ | հատ | 80 | 20000 | 250 | ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2 | II-րդ եռամսյակ | 96 |
| | | | | | | | | | | III-րդ եռամսյակ | 154 |
| 12 | 30197230/6 | Թղթապանակ՝ ռեզիններով Folder | "YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO" LTD ՉԺՀ | Թղթապանակ ոչ թափանցիկ պլաստիկ նյութից: Երկու կողմից ունի 2 ռեզինե ձգվող թելեր թղթապանակի բացված վիճակում տեղադրված են տարբեր կողմերում, որոնք՝ թղթապանակը փակելուց հետո աջի երկու անկյուններից ձգվում են թղթապանակի վրա: Ձևաչափը A4: | հատ | 250 | 12500 | 50 | ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2 | II-րդ եռամսյակ | 19 |
| | | | | | | | | | | III-րդ եռամսյակ | 31 |
| 13 | 30197232/5 | թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ Impulse | Ինպուլս Ա << | Թափանցիկ պոլիմերային թաղանթ՝ արագակարներին | հատ | 10 | 5000 | 500 | ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2 | II-րդ եռամսյակ | 154 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ամրացնելու հնարավորությամբ, հաստությունը առնվազն՝ 50 միկրոն, A4 (210x297մմ) ձևաչափի թղթերի համար: | | | | | III-րդ եռամսյակ | 346 |
| 15 | 30197234/6 | թղթապանակ, կոշտ կազմով /A4/ Alba Rado | "YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO" LTD ՉԺՀ | Թղթապանակ /ռեգիստր/ կոշտ ստվարաթղթե կազմով, մետաղյա ամրացման հարմարանքով A4 (210x297մմ) ձևաչափի թղթերի համար: Թղթապանակի կռնակի բարձրությունը՝ առնվազն 70մմ: Կազմի հաստությունը՝ առնվազն՝ 2մմ: Գույնը՝ սև: | հատ | 550 | 11000 | 20 | ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2 | II-րդ եռամսյակ | 8 |
| | | | | | | | | | III-րդ եռամսյակ | 12 |
| 16 | 30197321/3 | կարիչներ, մինչև 20 թերթի համար Kangaro | "YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO" LTD ՉԺՀ | Գրասենյակային կարիչ, մինչև 20 թերթ մետաղյա կապերով ամրացնելու համար | հատ | 520 | 5200 | 10 | ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2 | II-րդ եռամսյակ | 4 |
| | | | | | | | | | III-րդ եռամսյակ | 6 |
| 17 | 30197322/5 | կարիչներ, 20-50 թերթի համար Kangaro | "YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO" LTD ՉԺՀ | Գրասենյակային կարիչ, 20-50 թերթ մետաղյա կապերով ամրացնելու համար կամ | հատ | 125 | 1250 | 10 | ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2 | II-րդ եռամսյակ | 4 |
| | | | | | | | | | III-րդ եռամսյակ | 6 |
| 19 | 30197622/6 | թուղթ, A4 ֆորմատի Ballet | Ինթերնեյշնլ փեյփեր ՌԴ | A4, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ2, (210X297)մմ., պարունակությունը | կիլոգրամ | 680 | 85000 | 125 | ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2 | II-րդ եռամսյակ | 51 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 500 թերթ, սպիտակությունը ոչ պակաս քան 168 %, հաստությունը 113 միկրոն, հարթայնությունը 160 մլ/րոպե, պայծառությունը 112, անթափանց-ելիությունը 95 %, փաթեթավորված ֆիրմային թղթափաթեթով | | | | | | III-րդ եռամսյակ | 74 |
| 20 | 30199232/6 | Նամակի ծրար, A4 ձևաչափի Envelope | ՌԴ | Ծրար A4 ձևաչափի, ինքնասոսնձվող, թուղթը՝ օֆսեթ N1, խտությունը՝ առնվազն 100գր/մ2 , գույնը՝ սպիտակ: | հատ | 40 | 800 | 20 | ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2 | II-րդ եռամսյակներ | 8 |
| | | | | | | | | | | III-րդ եռամսյակներ | 12 |
| 21 | 30199238/7 | Նամակի ծրար, A 6 ձևաչափի Envelope | ՌԴ | Ծրար A 6 ձևաչափի, ինքնասոսնձվող, թուղթը՝ օֆսեթ, խտությունը՝ առնվազն 80գր/մ2 , գույնը՝ սպիտակ: | հատ | 15 | 7500 | 500 | ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2 | II-րդ եռամսյակ | 166 |
| | | | | | | | | | | III-րդ եռամսյակ | 334 |
| 23 | 39241210/4 | մկրատ, գրասենյակային Scissors | "YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO" LTD ՉԺՀ | Իրանը պլաստմասե, մետաղյա ծայրամասով, սեղմակով, գրպանին տեղադրելու ամրակով, 14-16սմ երկարությամբ: | հատ | 200 | 4000 | 20 | ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2 | II-րդ եռամսյակ | 8 |
| | | | | | | | | | | III-րդ եռամսյակ | 12 |
| 24 | 39263200/4 | գրասենյակային գիրք, մատյան, 70-200էջ, տողանի, սպիտակ էջերով | << | Գրասենյակիային գիրք , մատյան 70 էջ, համապատասխան ձևաչափի | հատ | 600 | 12000 | 20 | ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2 | II-րդ եռամսյակ | 8 |
| | | | | | | | | | | III-րդ եռամսյակ | 12 |
| 25 | 39263410/5 | ամրակ, մետաղյա, փոքր DL | "YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO" LTD ՉԺՀ | Փոքր, գրասենյակային ամրակներ՝ մետաղական կամ պոլիմերային պատվածքով,(25-33)մմ երկարությամբ: Թղթի դարսը՝ փարժեք ամրությամբ, միասնական պահելու | տուփ | 90 | 1800 | 20 | ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2 | II-րդ եռամսյակ | 8 |
| | | | | | | | | | | III-րդ եռամսյակ | 12 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կարողությամբ տուփում՝ առնվազն 100 հատ: | | | | | | |
| 26 | 39263420/3 | ամրակ, մետաղյա, մեծ DL | "YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO" LTD ՉԺՀ | Գրասենյակային ամրակներ, մետաղական, 50 մմ չափի թղթի տրցակները ամրացնելու համար | տուփ | 240 | 4800 | 20 | ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2 | II-րդ եռամսյակ |
| | | | | | | | | | | III-րդ եռամսյակ |

| Եռամսյակ | Քանակ |
|---|---|
| II-րդ եռամսյակ | 8 |
| III-րդ եռամսյակ | 12 |

**Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

**ԳՆՈՐԴ**
Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024099
ՀՎՀՀ 02505554

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«Սմարթլայն» ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ 01548908
Հեռ. 010 558483
Տնօրեն՝ Տ. Ղարիբյան

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«12» 06 2019 թ. կնքված
ՎԱՇՎՏՄ-ԳՀԱՊՁԲ-19/5-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 30192114/1 | Թանաք կնիքի բարձիկի համար | 0 | 0 | 0 | 0 | 0 | 154 | 154 | 154 | 154 | 440 | 440 | 440 | 440 |
| 2 | 30192114/2 | Թանաք կնիքի բարձիկի համար | 0 | 0 | 0 | 0 | 0 | 3094 | 3094 | 3094 | 3094 | 8840 | 8840 | 8840 | 8840 |
| 3 | 30192128/1 | գրիչ գելային | 0 | 0 | 0 | 0 | 0 | 2362.5 | 2362.5 | 2362.5 | 2362.5 | 6750 | 6750 | 6750 | 6750 |
| 5 | 30192133/1 | սրիչներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 210 | 210 | 210 | 210 | 600 | 600 | 600 | 600 |
| 6 | 30192160/1 | շտրիխներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 770 | 770 | 770 | 770 | 2200 | 2200 | 2200 | 2200 |

| | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | 30192710/1 | Սոսնձամատիտ գրասենյակային | 0 | 0 | 0 | 0 | 0 | 700 | 700 | 700 | 700 | 2000 | 2000 | 2000 | 2000 |
| 8 | 30192720/1 | գծանշիչ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 682.5 | 682.5 | 682.5 | 682.5 | 1950 | 1950 | 1950 | 1950 |
| 9 | 30197111/1 | կարիչի մետաղալարե կապեր, փոքր | 0 | 0 | 0 | 0 | 0 | 175 | 175 | 175 | 175 | 500 | 500 | 500 | 500 |
| 10 | 30197112/1 | կարիչի մետաղալարե կապեր, միջին | 0 | 0 | 0 | 0 | 0 | 262.5 | 262.5 | 262.5 | 262.5 | 750 | 750 | 750 | 750 |
| 11 | 30197230/1 | թղթապանակ, թելով, թղթյա | 0 | 0 | 0 | 0 | 0 | 7000 | 7000 | 7000 | 7000 | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| 12 | 30197230/2 | Թղթապանակ՝ ռեգիններով | 0 | 0 | 0 | 0 | 0 | 4375 | 4375 | 4375 | 4375 | 12500 | 12500 | 12500 | 12500 |
| 13 | 30197232/1 | թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 1750 | 1750 | 1750 | 1750 | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 15 | 30197234/1 | թղթապանակ, կոշտ կազմով /A4/ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 3850 | 3850 | 3850 | 3850 | 11000 | 11000 | 11000 | 11000 |
| 16 | 30197321/1 | կարիչներ, մինչև 20 թերթի համար | 0 | 0 | 0 | 0 | 0 | 1820 | 1820 | 1820 | 1820 | 5200 | 5200 | 5200 | 5200 |
| 17 | 30197322/1 | կարիչներ, 20-50 թերթի համար | 0 | 0 | 0 | 0 | 0 | 437.5 | 437.5 | 437.5 | 437.5 | 1250 | 1250 | 1250 | 1250 |
| 19 | 30197622/1 | թուղթ, A4 ֆորմատի | 0 | 0 | 0 | 0 | 0 | 29750 | 29750 | 29750 | 29750 | 85000 | 85000 | 85000 | 85000 |
| 20 | 30199232/1 | Նամակի ծրար, A4 ձևաչափի | 0 | 0 | 0 | 0 | 0 | 280 | 280 | 280 | 280 | 800 | 800 | 800 | 800 |
| 21 | 30199238/1 | Նամակի ծրար, A 6 ձ–աչափի | 0 | 0 | 0 | 0 | 0 | 2625 | 2625 | 2625 | 2625 | 7500 | 7500 | 7500 | 7500 |
| 23 | 39241210/1 | մկրատ, գրասենյակային | 0 | 0 | 0 | 0 | 0 | 1400 | 1400 | 1400 | 1400 | 4000 | 4000 | 4000 | 4000 |
| 24 | 39263200/1 | գրասենյակային գիրք, մատյան, 70-200էջ, տողանի, | 0 | 0 | 0 | 0 | 0 | 4200 | 4200 | 4200 | 4200 | 12000 | 12000 | 12000 | 12000 |

| | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | սպիտակ էջերով | | | | | | | | | | | | | | |
| 25 | 39263410/1 | ամրակ, մետաղյա, փոքր | 0 | 0 | 0 | 0 | 0 | 630 | 630 | 630 | 630 | 1800 | 1800 | 1800 | 1800 |
| 26 | 39263420/1 | ամրակ, մետաղյա, մեծ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 1680 | 1680 | 1680 | 1680 | 4800 | 4800 | 4800 | 4800 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**
Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024099
ՀՎՀՀ 02505554

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«Սմարթլայն» ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ 01548908
Հեռ. 010 558483
Տնօրեն՝ Տ. Ղարիբյան

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«12» 06 2019 թ. կնքված
ՎԱՇՎՏՄ-ԳՀԱՊՁԲ-19/5-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

______________________

______________________

գտնվելու վայրը ______________
հհ ______________
հվհհ ______________

Պատվիրատու

______________________

______________________

գտնվելու վայրը ______________
հհ______________
հվհհ______________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 3.1*
*« 12 » 06 2019թ. կնքված*
***ՎԱԾՎՏՄ-ԳՀԱՊՁԲ-19/5-1** ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N ______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ______________________
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ______________________-ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն
______________________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն
______________________
ստորագրություն